

Արձանագրություն N 1-03/18

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտական խորհրդի 2018 թ.-ի
մարտի 5-ի նիստի

Ներկա էին՝ Թոքմաջյան Հ.Վ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Հակոբյան Գ.Ա. (գ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գասպարյան Պ.Յու. (տ.գ.թ., դոցենտ), Հարությունյան Մ.Ա. (պ.գ.թ.), Խաչատրյան Գ.Մ. (ֆ.մ.գ.թ.), Գրիգորյան Թ.Գ. (գ.գ.թ.), Առաքելյան Ա.Ա. (գ.գ.թ.), Ավետիսյան Ս.Ա. (տ.գ.թ.), Ծատրյան Ա.Ա., Բաղունց Գ.Ռ., Հակոբյան Շ.Հ., Դավթյան Շ.Ա., Շահբազյան Ա.Վ., Սայիյան Ռ.Գ., Զաքարյան Գ.Է. (ուսանող), Գասպարյան Ի.Ա. (ուսանող), Առուշանյան Գ.Ա. (ուսանող), Ծատրյան Ս.Բ. (ուսանող):

Հրավիրված էին հոգաբարձուների խորհրդի անդամներ՝ Իսրայելյան Ռ.Գ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գալստյան Ս.Բ. (գ.գ.թ., դոցենտ), Շահնազարյան Ս.Ա. (գ.գ.թ., դոցենտ), Հարությունյան Ռ.Մ.:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Շուշիի տեխնոլոգիական համալսարանի «Անասնաբուժության և անասնաբուծության» ամբիոնի վարիչի ընտրությունների մասին:
2. Ավարտական աշխատանքների թեմաների հաստատման մասին:

Լսեցին 1- Շուշիի տեխնոլոգիական համալսարանի «Անասնաբուժության և անասնաբուծության» ամբիոնի վարիչի ընտրությունների մասին:

Որոշեցին 1 – Գիտխորհուրդը փակ գաղտնի քվեարկությունների արդյունքներով որոշել է. «Անասնաբուժության և անասնաբուծության» ամբիոնի վարիչ նշանակել գ.գ.թ., դոցենտ Սեյրան Ալեքսանդրի Շահնազարյանին:

Լսեցին 2 – Գիտխորհրդի քննարկմանը ներկայացվեց գյուղատնտեսական ֆակուլտետի «Ագրարային արտադրության էկոնոմիկա և կառավարում» և «Ագրոնոմիա» մասնագիտությունների ավարտական խմբերի դիպլոմային աշխատանքների թեմաները:

Որոշեցին 2 – Հաստատել գյուղատնտեսական ֆակուլտետի «Ագրարային արտադրության էկոնոմիկա և կառավարում» և «Ագրոնոմիա» մասնագիտությունների ավարտական խմբերի դիպլոմային աշխատանքների թեմաները (հավելված 1, 2):

Նախագահ՝ ստորագրություն Հ.Վ.Թոքմաջյան
Քարտուղար՝ ստորագրություն Ա.Ա.Առաքելյան